United Nations | UN WATER

unesco

Ջուր բոլոր մարդկանց համար

Հավասար իրավունքներ և հնարավորություններ

ՄԱԿ-ի Ջրային ոլորտի զարգացման համաշխարհային զեկույց, 2026թ.

Համառոտ ամփոփագիր

Անվտանգ և մատչելի խմելու ջրի ու սանիտարական ծառայությունների, ինչպես նաև տարբեր այլ նպատակներով բավարար ջրամատակարարման հասանելիությունը կարևոր է բոլոր մարդկանց ամենահիմնական կարիքների և հիմնարար ձգտումների բավարարման համար: Երբ խմելու ջրի, սանիտարական և հիգիենիկ (WASH) ծառայությունների հասանելիությունը բացակայում է, կանայք և աղջիկները հաճախ անհամաչափորեն իրենց վրա են վերցնում կենցաղում ջրով ապահովման պատասխանատվությունը:

Կանայք, սովորաբար, թերներկայացված են ջրամատակարարման կառավարման և կարգավորման ոլորտում, ներառյալ՝ ջրային ենթակառուցվածքների ֆինանսավորումը և զարգացումը: Սա կարող է խոչընդոտել ջրային ռեսուրսներին նրանց հասանելիությանը և օգուտների արդարացի բաշխմանը՝ սպառնալով նրանց առողջությանը, կենսապահովմանը և պարենային անվտանգությանը:

Գենդերային հավասարությունը կենսականորեն կարևոր ուղի է ջրի նկատմամբ արդար և հավասար հասանելիության ու օգտագործման համար:

«Ջուր բոլոր մարդկանց համար. հավասար իրավունքներ և հնարավորություններ» վերնագրով այս զեկույցը ներկայացնում է ջրի և գենդերային հավասարության միջև կապերի ու առաջընթացի համապարփակ, ապացույցների վրա հիմնված ամփոփումը: Այն նկարագրում է, թե ինչպես են նորմատիվ և քաղաքական շրջանակները մարմնավորվում խնդիրների վերլուծության, ծրագրերի մշակման սկզբունքների և ջրային ռեսուրսների ռազմավարական գործողությունների իրականացման մեջ: Հասկացվելով որպես իրավունքների, պարտականությունների և հնարավորությունների հավասար օգտագործում բոլոր մարդկանց համար՝ անկախ նրանց սեռից և/կամ գենդերային ինքնությունից, գենդերային հավասարությունը կենսականորեն կարևոր ուղի է ջրի նկատմամբ արդար և հավասար հասանելիության և օգտագործման համար:

Խմելու ջուր, սանիտարական պայմաններ և հիգիենա բնակավայրերում

2024 թվականի դրությամբ 2.1 մլրդ. մարդ դեռևս չունի անվտանգ խմելու ջրի հասանելիություն, մինչդեռ 3.4 մլրդ. մարդ դեռ չունի անվտանգ սանիտարական ծառայություններ, իսկ 1.7 մլրդ-ն տանը չունի տարրական հիգիենայի ծառայություններ:

Ջրի հավաքման համար առավել հաճախ պատասխանատու են լինում կանայք և աղջիկները, այդպիսով ենթարկելով իրենց ֆիզիկական լարվածության և անվտանգության ռիսկերի՝ հատկապես հեռավոր կամ անապահով տարածքներում: Ջուր կրելը կարող է հանգեցնել ֆիզիկական ծանրաբեռնվածության և վնասվածքների, և կանայք ու աղջիկները կարող են ենթարկվել գենդերային բռնության: Անբավարար սանիտարական պայմանների պատճառով անձնական կյանքի և անվտանգության բացակայությունը նույնպես անհամաչափորեն ազդում է կանանց և աղջիկների վրա: Երբ ջուրն անվտանգ չէ կամ ընդհատվում է, ջրի օգտագործման կառավարման, ռացիոնալացման և առաջնահերթության ամենօրյա չվճարվող աշխատանքը, ինչպես նաև հարազատների խնամքի աշխատանքը կարող է հանգեցնել տնային պայմաններում հիվանդությունների առաջացման:

Ջրի և սանիտարական պայմանների անհատի իրավունքը երաշխավորում է բոլոր մարդկանց հավասար և առանց խտրականության օգտվել անվտանգ ու մաքուր խմելու ջրից, պատշաճ սանիտարական պայմաններից: Այս իրավունքների իրականացումը պահանջում է վերացնել անվտանգ խմելու ջրի և սանիտարական պայմանների հասանելիության բոլոր խոչընդոտները, հատկապես՝ բնակչության մարգինալացված խմբերի համար: Սա ներառում է նաև ջրային կառավարման գործընթացներում տղամարդկանց և կանանց հավասար մասնակցությանը խոչընդոտող բոլոր արգելքների վերացումը:

Այնուամենայնիվ, կանանց՝ ջրի հասանելիության, մասնակցության և առաջնորդության հարցում գենդերային անհավասարությունները շարունակում են բարձր մնալ, հատկապես ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներում: WASH ծառայությունների ոլորտում գենդերային անհավասարությունը դրսևորվում է որպես անհավասարության այլ ձևերի և խտրական սոցիալական պրակտիկայի մի մաս:

Հողի երաշխավորված սեփականության և բնակարանային իրավունքները հաճախ նախապայման են դառնում համայնքային ջրամատակարարման և սանիտարական ծառայությունների հասանելիության համար: Բնակարանային անբարվոք վիճակը, հողի սեփականության անկայուն իրավական կարգավիճակը և բնակարանային խտրականությունը կարող են անհամաչափ ազդեցություն ունենալ կանանց վրա:

Դպրոցներում անվտանգ ջրամատակարարման, սանիտարական և հիգիենիկ պայմանների հասանելիությունը նպաստում է առողջությանը, դպրոցներ հաճախելիության բարելավմանը և, ի վերջո, ուսուցման ավելի լավ արդյունքներին: Առողջապահական հաստատություններում անձնակազմի և հիվանդների համար պետք է նախատեսված լինեն զուգարաններ՝ բաժանված ըստ սեռի, որոնք պատշաճ կերպով կսպասարկվեն, և պետք է ներառեն նաև դաշտանային հիգիենայի միջոցներ:

WASH ծառայությունների ոլորտում գենդերային անհավասարությունը դրսևորվում է որպես անհավասարության այլ ձևերի և խտրական սոցիալական պրակտիկայի մի մաս:

WASH ոլորտի համայնքը հաճախ կոչ է անում կիրառել «ցածրարժեք» լուծումներ՝ առանց ուսումնասիրելու տնային տնտեսությունների վճարունակությունը, նման վճարումների այլընտրանքային արժեքը կամ այն, թե իրականում ով է կատարում այդ վճարումները: Հնարավոր է, որ WASH-ի որոշ մոտեցումներ համարվում են ցածրարժեք նաև այն պատճառով, որ դրանց կիրառման և պահպանման հետ կապված աշխատանքը մնում է չվճարված:

WASH ոլորտում գենդերային անհավասարությունների հաղթահարումը պահանջում է միջամտություններ, որոնք սահմանափակված չեն միայն տեխնիկական լուծումներով, այլ ուղղված են նաև կառուցվածքային և սոցիալական անհավասարությունների հաղթահարմանը: Օրինակները ցույց են տալիս, որ երբ կանանց մասնակցությունը կազմակերպվում է այնպես, որ խրախուսի առաջնորդությունը և նրանց ձայնը, այլ ոչ թե պարզապես ձևական պահանջ կատարի, կանայք դառնում են գենդերային հավասարության և WASH ոլորտում արդարության ակտիվ փոփոխությունների կրողներ:

Պարեն և գյուղատնտեսություն

Գյուղատնտեսության մեջ ջրի հասանելիությունն ու կառավարումը կարող են մեծապես պայմանավորված լինել գենդերային գործոններով: Հողի և ջրի օգտագործման ավանդական կանոնակարգերի և իրավական շրջանակների պատճառով, գյուղական վայրերում ոռոգման, անասնապահության, ջրագործության և կենցաղային նպատակներով ջրօգտագործման ժամանակ կանայք, տղամարդկանց համեմատ, կարող են ավելի մեծ խոչընդոտների հանդիպել ջրի հասանելիության և վերահսկման առումով:

Ջրային ռեսուրսներից օգտվելու կանանց իրավունքների երաշխիքները կարող են բարելավվել, եթե միջոցառումների ընթացքում ընդունվեն գենդերային ուղղվածություն ունեցող մոտեցումներ՝ մարտահրավեր նետելով հայրիշխանական արժեքներին: Այնուամենայնիվ, հողի և ջրային ռեսուրսների պաշտոնական սեփականությունը չի երաշխավորում վերահսկողություն, հատկապես, երբ օգտագործման (հասանելիություն և ջրի բացթողում) իրավունքները տարբերվում են վերահսկողության իրավունքներից (կառավարում, բացառում և օտարում):

Գյուղատնտեսության ոլորտում հողերի հասանելիության և ջրային ռեսուրսների կառավարման նկատմամբ գենդերային անհավասարությունը կարող է բացասաբար ազդել աղջիկների կրթության, կանանց ապրուստի միջոցների և նրանց կարգավիճակի բարձրացման վրա, ինչպես նաև տնային տնտեսությունների առողջության և սննման վրա: Այս անհավասարությունը խորացնում է կանանց սննդի անապահովության խնդիրը:

Գյուղատնտեսությունում արտագաղթը ձևափոխում է գենդերային դերերը: Շատ երկրներում տղամարդկանց արտագաղթի հետևանքով աճել է կնոջ կողմից գլխավորվող տնային տնտեսությունների թիվը: Արտագաղթի ազդեցությունը կանանց որոշողականության վրա գյուղատնտեսական արտադրությունում, եկամուտների վերահսկման, խմբային անդամակցության և աշխատանքի բեռնաթափման հարցերում կախված է այնպիսի գործոններից, ինչպիսիք են ընտանիքի հողի սեփականությունը, կանանց դիրքն ընտանիքում և այն, թե արդյոք ընտանիքը ստանում է փոխանցումներ:

Ոռոգման ջրի հանդեպ կանանց հասանելիության բարելավումը կարող է օգուտներ բերել գյուղատնտեսական արտադրության ընդլայնումից դուրս: Ոռոգման տեխնոլոգիաները կարող են նվազեցնել աշխատաքն ու ժամանակի ծախսերը: Երբ դրանք նախագծվում են որպես բազմա-ֆունկցիոնալ ջրային ծառայություններ, դրանք կարող են աջակցել ինչպես կենցաղային, այնպես էլ այլ արտադրական կարիքներին: Կանանց խմբերն ու հասարակական կազմակերպություն-ները հզորացնելու միջոցով կոլեկտիվ գործունեու-թյան խթանումը կարող է բազմապատկել այս ձեռքբերումները:

Արդյունաբերություն, բիզնես և էներգետիկա

Աշխարհի բազմաթիվ հատվածներում ջրային ոլորտը դժվարությամբ է գրավում, պատրաստում և պահպանում մարդկային ռեսուրսները, ներառյալ՝ կանանց մասնակցությունը կառավարման և ղեկավար պաշտոններում: Որոշ ջրային կոմունալ ծառայություններում կին աշխատակիցների թիվը մոտ է 40%-ին, մինչդեռ որոշ կազմակերպություն-ներում և ստորաբաժանումներում կին անձնակազմ չկա: Նման իրավիճակում հնարավոր է առաջ-ընթաց գրանցել WASH ոլորտում զբաղվածության գենդերային հավասարության մեջ, հատկապես այնպիսի պաշտոններում, ինչպիսիք են հանրային սանիտարիան և առողջապահությունը:

Էներգիայի հասանելիությունն անհրաժեշտ է կենցաղում և գյուղատնտեսության մեջ ջրօգտա-գործման համար, հատկապես այնտեղ, որտեղ պահանջվում է ջրի՝ պոմպերով մղում: Չնայած կանայք ավանդաբար օգտագործում էին ձեռքի պոմպեր, վառելիքով և արևային մարտկոցներով աշխատող համակարգերին անցնելը խնայում է ժամանակը:

Հայտնի է, որ աշխատավայրերում WASH-ը բարձրացնում են անձնակազմի աշխատունակու-թյունը և առողջությունը: Այնուամենայնիվ, սանիտա-րական հանգույցները դեռևս միշտ չէ, որ առանձին են նախատեսված տղամարդկանց և կանանց համար. հաճախ դրանք չեն համապա-տասխանում կանանց հատուկ կարիքներին, ներառյալ՝ դաշտանի, հղիության և կրծքով կերակրման ժամանակաշրջա-նում գտնվող կանանց պահանջները: Շատ երկրներ և կազմակերպություններ ընդունել են ուղեցույցներ աշխատակիցների համար նախատեսված զուգա-րանի քանակի վերաբերյալ՝ տարբերակելով տղամարդկանց և կանանց պահանջները, թեև փոքր ձեռնարկություններում նման ուղեցույցների իրակա-նացումը կարող է ավելի դժվար լինել:

Բիզնեսն ու արդյունաբերությունը կարող են խթանել ջրօգտագործման մեջ գենդերային հավասարությունը՝ պաշտպանելով կայուն զարգացման, հավասարության և ներառականության վրա հիմնված քաղաքականու-թյունն ու պրակտիկան: Ընկերությունները կարող են նաև նախաձեռնել վերապատրաստում, խրախուսել կանանց առաջնորդությունը և ներդրումներ կատարել հանրային ջրային ենթակառուցվածքներում: Կորպորա-տիվ սոցիալական պատասխանատվության շրջանակ-ներում արդյունաբերությունը կարող է ֆինանսավորել նախաձեռնություններ, որոնք ուղղված են կանանց ջրի, կրթության և ապրուստի միջոցների հասանելիության ընդլայնմանը: Սա կարող է ներառել կրթաթոշակներ կանանց համար, ովքեր ուսումնասիրում են ջրի կառավարումը կամ ներդրումներ են կատարում կանանց կողմից ղեկավարվող ջրային ձեռնարկություններում:

Հայտնի է, որ աշխատավայրերում WASH-ը բարձրացնում են անձնա-կազմի աշխատունակությունը և առողջությունը

Գենդերային աուդիտները կարող են լինել արդյունավետ գործիքներ՝ համակարգված կերպով գնահատելու համար, թե որքանով է գենդերային հավասարությունը ներդրված կազմակերպություն-ներում, ծրագրերում և ոլորտներում, այդ թվում՝ արդյունաբերությունում, բիզնեսում և էներգետիկա-յում: Նման աուդիտներն ուսումնասիրում են քաղաքականությունը, աշխատատեղերի պրակտիկան և կառավարման կառույցները՝ նպատակ ունենալով բացահայտել այն անարդարությունները, որոնք կարող են սահմանափակել կանանց մասնակցությունը կամ որոնցում նրանք կարող են օգտվել հնարավորություն-ներից և ռեսուրսներից:

Կլիմայի փոփոխություն և հիդրոօդերևութաբանական աղետներ

Կլիմայի փոփոխությունն ավելի ու ավելի շատ սպառնալիքներ է ստեղծում մարդկանց բարեկեցության համար՝ ջրի և սննդի անվտանգության, հանրային առողջության, տնտեսական կայունության և շրջակա միջավայրի վրա դրա ազդեցության պատճառով: Վտանգավոր հիդրոօդերեւութաբանական երևույթների ավելի հաճախակի առաջացումը և մասշտաբները ընդգծում են աղետների ռիսկի կառավարման (ԱՌԿ) ռազմավարության հարմարվողական, կայուն և ինտեգրված մոտեցումների հրատապ անհրաժեշտությունը:

Գենդերն աղետների խոցելիության հիմնական կառուցվածքային որոշիչ է: Զարգացման արդյունքների բարելավումը կարող է կախված լինել աղետներին դիմակայելու ջանքերին գենդերային նկատառումների ինտեգրումից:

Հիդրոօդերևութաբանական աղետները կարող են անհամաչափորեն ազդել կանանց, աղջիկների և գենդերային այլ դիրքորոշում ունեցող անձանց վրա՝ պայմանավորված ռեսուրսներին, որոշումների կայացման գործընթացներին և ծառայություններին հասանելիության համակարգային անհավասարություններով: Կանայք հատկապես կարող են բախվել իրենց ապրուստի միջոցների, իրավունքների, անվտանգության և առողջության նկատմամբ բարձրացված ռիսկերին (հատկապես դաշտանային առողջության և հիգիենայի առումով): Հիդրոօդերևութաբանական ծառայությունները, ինչպիսիք են վաղ ազդարարման համակարգերը, որոնք զգայուն են անհավասարության նկատմամբ, արագ արձագանքում են դրան և ապահովում են ներառական ներկայացուցչություն, կարող են օգնել ապահովել, որ բոլոր սեռերի մարդիկ ներգրավված լինեն, պաշտպանված և օժտված լինեն իրավունքներով և հնարավորություններով:

Չնայած գենդերային հաշվառումը և ԱՌԿ-ն լայն աջակցություն են ստացել, և ներկայումս աճում է իրազեկությունը ԱՌԿ-ի գենդերային ասպեկտների վերաբերյալ, դրա գործնական իրականացումը մնում է սահմանափակ՝ մասամբ առաջնորդության բացակայության պատճառով: Մեղմացման ջանքերը, որոնք հաշվի են առնում գենդերային ասպեկտները, կարող են օգնել կայուն ենթակառուցվածքների և ներառական քաղաքականության ստեղծմանը, որոնք կարող են նվազեցնել երկարաժամկետ ռիսկերը և նպաստել ջրի կայուն համապարփակ կառավարմանը:

Արդար և նպատակային միջամտությունները կարող են օգնել պաշտպանել խոցելի բնակչությանը և պահպանել մարդու իրավունքները՝ նվազագույնի հասցնելով բնական աղետների պատճառած անմիջական սոցիալական և տնտեսական վնասները: Հասկանալով, թե ինչպես է գենդերային գործոնն ազդում հիդրոօդերևութաբանական աղետների ազդեցության, ռեսուրսների հասանելիության, կարիքների և արձագանքման վրա, հիմք է ստեղծում ԱՌԿ միջոցառումների մշակման համար, ինչպես նաև կլիմայի փոփոխության հարմարվողականության նպատակային, արդար և ներառական ռազմավարությունների մշակման համար:

Էկոհամակարգեր

Ջրային էկոհամակարգերի քայքայման և կենսաբազմազանության կորստի հիմնական շարժիչ ուժերը կլիմայի փոփոխությունը, հողօգտագործման փոփոխությունը և աղտոտումն են: Այս բարդ կապերի վերլուծությունը գենդերային հավասարության տեսանկյունից կարող է օգնել ավելի լավ հասկանալ դրանց կոնկրետ և հաճախ անհամաչափ ազդեցությունը կանանց և տղամարդկանց վրա, նաև ընդգծել տղամարդկանց ու կանանց տարբեր դերերը ջրային և էկոհամակարգերի կառավարման գործում՝ միաժամանակ նպաստելով գենդերային հավասարությանը:

Տարբեր մշակույթներում և համայնքներում կանայք դարեր շարունակ ներգրավված են եղել էկոհամակարգերի պաշտպանության և կառավարման գործում՝ զարգացնելով և սերնդեսերունդ փոխանցելով տեղական ու ավանդական գիտելիքները: Կանանց համար էկոհամակարգային ծառայություններին հավասար հասանելիության և էկոհամակարգերի կառավարմանը մասնակցության ապահովումը կարող է օգնել նվազեցնել գենդերային անհավասարությունը՝ նպաստելով ավելի հավասար և դիմացկուն համայնքների կառուցմանը:

Համայնքային մակարդակում սոցիալական և քաղաքական ուժի միտումը կարող է էական դեր ունենալ ռեսուրսների օգտագործման և դրանց հասանելիության, ինչպես նաև դրանց տնտեսական օգուտների որոշման գործում, հատկապես այն դեպքերում, երբ ընդհանուր հողի կամ ռեսուրսների հասանելիությունը սահմանափակվում է սոցիալ-մշակութային նորմերում արմատավորված գենդերային խտրականությամբ:

Ջրային ռեսուրսների և էկոհամակարգերի կառավարման մեջ բնիկ ու տեղական բնակչության ավանդական գիտելիքների հաշվառումը կենսական նշանակություն ունի տեղական իշխանությունների և ջրային ռեսուրսների, էկոհամակարգերի վերականգնման ու կառավարման համայնքային մոտեցումների համար:

Գենդերային մոտեցումների կիրառումը կարող է նպաստել ջրի հետ կապված էկոհամակարգերի կառավարման ավելի ընդգրկուն, կայուն և նորարարական ռազմավարությունների ստեղծմանը՝ հաշվի առնելով կանանց և աղջիկների հատուկ կենսապայմանները: Չնայած, որ կանայք կարող են կրել էկոհամակարգերի դեգրադացիայի անհամաչափ բեռը գենդերային անհավասարության, ջրի և բնական ռեսուրսների սահմանափակ հասանելիության և սոցիալական անհավասարության պատճառով, նրանք ակտիվ դեր են խաղում որպես համայնքի անդամներ և կարևոր գիտելիքներ ունեցող առաջնորդներ են, ովքեր կարող են նպաստել համայնքների կենսունակությանը, արտադրողականությանը և կայունությանը:

Տարածաշրջանային հեռանկարներ

Ենթասահարական Աֆրիկա

Սոցիալ-տնտեսական խոչընդոտները, ավանդական սովորույթները և ժառանգության մասին օրենքները, որոնք ավանդաբար նպաստում էին տղամարդկանց, հաճախ սրում են Ենթասահարական Աֆրիկայում ջրի հասանելիության գենդերային անհավասարությունը: Սա կարող է հանգեցնել տղամարդկանց և կանանց անհավասար ներգրավվածության և ջրի հետ կապված զարգացման հետևանքների և կլիմայական խնդիրների: Կառավարման կառույցների ամրապնդումը կարող է օգնել ապահովել հավասար հասանելիություն ջրային ռեսուրսներին և ջրամատակարարման, սանիտարական պայմանների և հիգիենայի (WASH) ծառայություններին՝ գիտակցելով կանանց կարևոր դերը ջրային ռեսուրսների կառավարման և որոշումների կայացման գործընթացներում ու ներառելով բնիկ ժողովրդի գիտելիքները:

Կարողությունների զարգացման նախաձեռնությունները կարող են նպաստել նաև կանանց և երիտասարդների հզորացմանը կրթության և մասնագիտական զարգացման միջոցով՝ դրանով իսկ խթանելով ջրի հետ կապված մասնագիտություններում գենդերային հավասարությանը: Գենդերային հիմքով իրազեկումը, մոնիտորինգը և գնահատումը կարող են հանգեցնել համայնքներում մասնակիցների վարքագծի և ջրօգտագործման փոփոխություններին՝ ջրի հասանելիության գենդերային անհավասարությունը կանխելու համար: Հաշվի առնելով գենդերային ասպեկտները ջրային ռեսուրսների կառավարման և կլիմայի փոփոխության նկատմամբ կայունության բարձրացման ջանքերում, Ենթասահարական Աֆրիկայի երկրները կարող են հասնել ավելի արդար և կայուն զարգացման արդյունքների:

Կառավարման կառույցների ամրապնդումը կարող է օգնել ապահովել հավասար հասանելիություն ջրային ռեսուրսներին և WASH ծառայություններին

Տարածաշրջանում ջրամատակարարման բազմաթիվ ծրագրեր բավարար ֆինանսավորում չեն ստանում, և անհրաժեշտ է ավելացնել ներդրումները՝ գենդերային նկատառումներով նախաձեռնություններին աջակցելու համար: Ներառական և գենդերային նկատառումներով ֆինանսավորումը կարող է օգնել Ենթասահարական Աֆրիկայում ջրային խնդիրների լուծմանը: Ենթակառուցվածքների և ջրամատակարարման ծառայությունների բարելավման համար կոմունալ վճարումների բջջային վճարային տեխնոլոգիաների օգտագործումը, հանրային–մասնավոր գործընկերության զարգացումը և նպատակային շուկայավարման և հաղորդակցության ռազմավարությունների իրականացումը վստահության ամրապնդման և կենսական ներդրումների ներգրավման հիմնական տարրերն են:

Գենդերային ասպեկտները հաշվի առնող ֆինանսավորումը կարող է խթանել նորարարությունը ջրամատակարարման ոլորտում՝ խրախուսելով լուծումների մշակմանը, որոնք հաշվի են առնում կանանց և մարգինալացված խմբերի հատուկ կարիքները: Սա պահանջում է համագործակցություն կառավարությունների, միջազգային կազմակերպությունների և մասնավոր հատվածի շահագրգիռ կողմերի միջև՝ ռեսուրսները մոբիլիզացնելու և ապահովելու համար, որպեսզի ֆինանսավորման մեխանիզմները Ենթասահարական Աֆրիկայում լինեն ընդգրկուն ու արդար:

Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջան

Թեև գենդերային դինամիկան տարբեր համատեքստերում կարող է տարբերվել, կանայք և աղջիկները կարևոր դեր են խաղում կենցաղային և արտադրական ջրային ռեսուրսների կառավարման մեջ: Սակայն նրանք Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում բախվում են ջրային ոլորտին առնչվող գենդերային առանձնահատուկ խնդիրների: Դրանց թվում են՝ սահմանափակ և անհավասար հասանելիություն ջրային ռեսուրսներին, առողջության, անվտանգության, կրթության, տնտեսական և կենսապահովման հնարավորությունների հետ կապված ռիսկեր, ջրային կառավարման համակարգերում թերի ներկայացվածություն, ինչպես նաև կլիմայի փոփոխությամբ պայմանավորված աճող սպառնալիքներ:

Տարածաշրջանում WASH ծառայությունների ոլորտում գրանցվել է զգալի առաջընթաց: Սակայն խնդիրները շարունակում են պահպանվել գյուղական տարածքներում և ոչ պաշտոնական բնակավայրերում՝ անհամաչափորեն ազդելով կանանց և աղջիկների վրա: Հետազոտական տվյալները ցույց են տալիս, որ ջրամատակարարման ծրագրերում ու քաղաքականություններում գենդերային մոտեցման ներառումը և կանանց մասնակցության ապահովումը կարող են բարձրացնել ծրագրերի արդյունավետությունը, կայունությունը և նպաստել օգուտների ավելի արդար բաշխմանը:

Կանայք՝ ներառյալ տեղաբնիկ և տեղական համայնքների ներկայացուցիչները, ունեն փորձագիտական և ավանդական գիտելիքներ, ինչպես նաև յուրահատուկ փորձ, գաղափարներ և ձայն, ինչը կարևոր նշանակություն ունի ջրային ռեսուրսների քաղաքականությունների, ծրագրերի, ֆինանսավորման բաշխման և միջազգային երկխոսության ձևավորման համար:

Ջրային ռեսուրսների հասանելիության, կառավարման և կարգավորման գործընթացներում գենդերային հավասարության ապահովումը սոցիալական արդարության հարց է, ինչպես նաև կայուն զարգացման և կլիմայական դիմակայունության կարևոր նախապայման: Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում գենդերի ու ջրի հետ կապված խնդիրների հաղթահարումը պահանջում է խորքային և փոխակերպող փոփոխություններ մտածելակերպում, սոցիալական նորմերում, տվյալների հավաքագրման և օգտագործման համակարգերում, քաղաքականություններում և ներդրումներում: Տարածաշրջանի տարբեր երկրների օրինակները ցույց են տալիս, թե ինչպես կարող են քաղաքականություն մշակողները և ոլորտի մասնագետներն ուժեղացնել ջրային կառավարման համակարգերը՝ զարգացնելով գենդերազգայուն մոտեցումներ, ներառական որոշումների կայացման գործընթացներ և նպատակային միջամտություններ, որոնք ճանաչում են կանանց և աղջիկների կարևոր դերը որպես փոփոխությունների շարժիչ ուժ:

Լատինական Ամերիկա և Կարիբյան երկրներ

Ջուրը կենսական նշանակություն ունի կենցաղային և խնամքի հետ կապված աշխատանքների համար: Լատինական Ամերիկայում և Կարիբյան տարածաշրջանում այդ պարտականությունները հիմնականում ընկնում են կանանց վրա և սովորաբար մնում են չվճարվող ու չճանաչված:

Լատինական Ամերիկայում և Կարիբյան տարածաշրջանում ջրային քաղաքականության մեջ գենդերային հավասարության ներառումը հնարավոր է և կարող է բերել փոխակերպող արդյունքների: Սակայն այդ գործընթացը դեռևս դանդաղ է առաջ գնում և բավարար չափով չի ընդլայնվում: Կանայք՝ հատկապես գյուղական և տեղաբնիկ համայնքներում ապրողները, կարևոր, սակայն հաճախ չճանաչված դեր ունեն ջրի հասանելիության ապահովման, դրա կառավարման և շրջակա միջավայրի պահպանության գործում: Ներառական քաղաքականությունների և ծրագրերի միջոցով նրանց աջակցելու դեպքում կանանց առաջնորդությունը կարող է նպաստել ջրային կառավարման ավելի արդար և կայուն համակարգերի ձևավորմանը:

Այնուամենայնիվ, կառուցվածքային կայուն խոչընդոտները շարունակում են պահպանվել: Սահմանափակ և անվտանգ WASH ծառայությունների հասանելիությունը, անարդարաչափ հողային և ռեսուրսային սեփականությունը, ինչպես նաև կանանց թերի ներկայացվածությունը որոշումների ընդունման գործընթացներում շարունակում են ամրապնդել գենդերային անհավասարությունները: Չվճարվող ջրային աշխատանքի բեռը հատկապես սահմանափակում է կանանց կրթության, զբաղվածության և համայնքային մասնակցության հնարավորությունները:

Կան խոստումնալից նախաձեռնություններ, որոնք կարող են կրկնօրինակվել՝ հաշվի առնելով տարբեր տարածաշրջանային համատեքստերը, և որոնք հնարավոր է ընդլայնել ու հարմարեցնել տարածաշրջանային մակարդակով: Ավանդական և տեղական գիտելիքների, հատկապես տեղաբնիկ համայնքների, ճանաչումն ու ինտեգրումը կարևոր է մշակույթային արժեքներին համահունչ և կայուն ջրային քաղաքականության մշակման համար:

Ջրի կառավարման ոլորտում գենդերային հավասարության հասնելը պահանջում է համակարգային փոփոխություններ՝ ներառյալ սեռով բաժանված տվյալների հավաքագրում, ինստիտուցիոնալ խոչընդոտների վերացում, գյուղական ջրային ենթակառուցվածքների զարգացում և կանանց ավելի լայն ընդգրկում ջրային կառավարման, այլ կապված ոլորտներում, օրինակ՝ հողօգտագործում և տեխնոլոգիա: Այս ջանքերը կարևոր են տարածաշրջանում ոչ միայն սոցիալական արդարության ապահովման, այլև կայուն և ջրային անվտանգության վրա հիմնված համայնքների ձևավորման համար:

Եվրոպա

Չնայած Եվրոպայում ջրամատակարարման և սանիտարական պայմանների ոլորտում ապահովվել է գրեթե համընդհանուր հասանելիություն, գենդերային անհավասարությունները շարունակում են գոյություն ունենալ ջրային ոլորտի բազմաթիվ ասպեկտներում: Կանայք դեռևս թերի են ներկայացված տեխնիկական, կառավարման և քաղաքականություն մշակող պաշտոններում, այն դեպքում, երբ Եվրոպական կառույցներում գենդերային հավասարության ոլորտում նկատելի առաջընթաց կա: Կառուցվածքային խոչընդոտները, ինչպիսիք են մենթորության բացակայությունը, գենդերային կերպով ձևավորված աշխատանքային սպասելիքները և աշխատանք-կյանք անհավասարակշռությունը, կարող են նպաստել կանանց աշխատանքից հեռանալուն և կրճատել նրանց աճի հնարավորությունները:

Գենդերային նման անհավասարությունը ոչ միայն տեխնիկական բացերի արդյունք է, այլ ավելի շուտ բխում է խորը արմատավորված ինստիտուցիոնալ և սոցիալ-մշակութային խնդիրներից, թե ինչպես են ջրային համակարգերը մշակվում, կառավարվում և ֆինանսավորվում: Կանանց դերը ջրային աշխատանքներում՝ հատկապես կենցաղային և խնամքի հետ կապված գործառույթներում, շարունակում է մնալ արժևորվածության ցածր մակարդակում և մեծապես անտեսված են ջրային պլանավորման և բյուջետավորման գործընթացներում:

Ջրի կառավարման մեջ գենդերային վերլուծության ինտեգրման փոփոխությունը կարող է նպաստել այս խոչընդոտների հաղթահարմանը: Ինստիտուտները կարող են շարունակաբար հավաքել և կիրառել սեռով բաժանված տվյալներ ջրի քաղաքականությունների ձևավորման, իրականացման և վերահսկողության գործընթացներում: Ջրային ծառայությունների մատուցման և գնագոյացման համակարգերի շրջանակներում երեխաների խնամքի և տնային աշխատողների չվճարվող աշխատանքի գնահատումը կարող է օգնել գիտակցել կանանց տնտեսական ներդրումը ջրային ռեսուրսների կառավարման գործում:

Արտացոլելով գենդերի, տարիքի, էթնիկ պատկանելության և տնտեսական կարգավիճակի փոխկապակցված իրողությունները, որոնք հավաքականորեն որոշում են ջրի հետ կապված վտանգների նկատմամբ խոցելիության մակարդակը, ռիսկերի գնահատման անցկացումը կարող է նպաստել ներառականության ապահովմանը: Գենդերային բյուջետավորման գործիքների կիրառումն ազգային և եվրոպական մակարդակներում կարող է խթանել ջրային ոլորտում ներդրումները՝ տեխնիկական արդյունավետության, սոցիալական հավասարության և երկարաժամկետ կայունության բարձրացման համար:

Արաբական տարածաշրջան

Արաբական տարածաշրջանն աշխարհի ամենասուր ջրի սակավություն ունեցող շրջաններից մեկն է: Լրացուցիչ ճգնաժամերը կարող են խորացնել տարածաշրջանում ջրամատակարարման խնդիրը, ներառյալ՝ կլիմայի փոփոխությունը, հակամարտությունները, սոցիալ-տնտեսական և քաղաքական ցնցումները: Կանայք և աղջիկները հաճախ անհամաչափորեն տառապում են այդ ազդեցություններից՝ ավանդական գենդերային դերերի հետ կապված կարծրատիպերի պատճառով:

Ջրային ծառայությունների մատուցման և գնագոյացման համակարգերի շրջանակներում երեխաների խնամքի և տնային աշխատողների չվճարվող աշխատանքի գնահատումը կարող է օգնել գիտակցել կանանց տնտեսական ներդրումը ջրային ռեսուրսների կառավարման գործում:

Չնայած կանանց՝ ջրային ռեսուրսների կառավարման մեջ ներգրավելու գործում որոշակի հաջողություններ են գրանցվել, այնուամենայնիվ, անհրաժեշտ է մեծացնել տեմպերը: Կրթությունն ու մասնագիտական պատրաստվածությունը կարող են օգնել կանանց և աղջիկներին ձեռք բերել գիտելիքներ և հմտություններ, որոնք անհրաժեշտ են հաջողության հասնելու համար: Ընդհանուր մշտական խոչընդոտը գենդերային կարծրատիպերի առկայությունն է, ինչը կարող է խոչընդոտել կանանց գիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության և մաթեմատիկայի (STEM) ֆակուլտետ ընդունվելուն և ջրային ռեսուրսների կառավարմանը մասնակցելուն:

Գենդերային հաշվառման քաղաքականությունը կարող է նպաստել նաև ջրային ոլորտում ազգային և ենթազգային մակարդակներում կանանց ներգրավմանը: Դա հաղթահարելու համար կարող են օգտագործվել մի շարք միջոցառումներ, ներառյալ՝ աշխատանքի ընդունման ավելի արդար պրակտիկան և ծրագրերը, որոնք մեծացնում են կանանց ազդեցությունը ջրային ռեսուրսների կառավարման վրա:

Մոնիտորինգի և հաշվետվությունների ուժեղ մեխանիզմները, ինչպես նաև լավագույն փորձի փոխանակումը, հաջողության պատմությունները և քաղված դասերը, կարող են ուղեցույց հանդիսանալ ապագա նախաձեռնությունների համար, որոնք ուղղված են կանանց՝ ջրային ռեսուրսների կառավարման և WASH ոլորտները ղեկավարելուն և որոշումների կայացման գործընթացներին մասնակցելուն, միաժամանակ հաղթահարելով գենդերային կարծրատիպերը, որոնք կարող են խոչընդոտել կանանց ներգրավմանը:

Չնայած մասնագիտական վերապատրաստումը և կարողությունների զարգացումը կարող են նպաստել կանանց հզորացմանը, անհրաժեշտ է նաև ազգային քաղաքականություն՝ կրթությունը հատուկ գործողությունների վերածելու համար:

Տվյալներ, կրթություն և կարողությունների զարգացում

Գենդերային հավասարությունը ջրային ռեսուրսների հասանելիության և կառավարման ոլորտում, գենդերային հավասարության առաջընթացի վերաբերյալ տվյալները, ինչպես նաև հավասարության ապահովման համար անհրաժեշտ կրթությունն ու կարողությունների զարգացման ծրագրերը հիմնարար նշանակություն ունեն կանանց և տղամարդկանց կյանքի բարելավման համար, ինչպես նաև կայուն զարգացման նպատակների հասնելուն՝ շատ ավելի լայն առնչությամբ ջրային ոլորտից դուրս: Ջրային ոլորտում սեռով բաժանված տվյալների անհրաժեշտության կոչը նորություն չէ: Սեռով բաժանված տվյալներ պարբերաբար հավաքագրվում են այլ ոլորտներում ևս, սակայն անգամ այնտեղ, որտեղ կան կանանց չարժևորված աշխատանքի ժամանակը հաշվելու մեթոդներ, դրանք քիչ են օգտագործվում: Լավագույն դեպքում՝ գենդերային տվյալների բացերը ջրային ոլորտում գենդերային անհավասարությունները մեղմելու հնարավորությունը բաց թողնելու առիթ են հանդիսանում: Վատագույն դեպքում՝ դրանք թույլ են տալիս համայնքներին, ինչպես նաև հետազոտողներին, դոնորներին և քաղաքականություն մշակողներին ընդունել «անվճար» կանացի աշխատանքը որպես բնականոն, շարունակելով նախագծել և առաջ մղել ջրային տեխնոլոգիաներ, որոնք սխալմամբ ներկայացվում են որպես «ժամանակավրեպ» կամ «պակասարժեք», մինչդեռ իրականում, հաշվի առնելով լրացուցիչ աշխատանքի ծախսերը, այդ տեխնոլոգիաներն իրականում «բարձրարժեք» են:

Ջրային ծրագրերի մոնիտորինգն ու գնահատումը գենդերային տեսանկյունից կազմակերպելու համար անհրաժեշտ է զարգացնել հմտություններ և երկրում առկա կարողություններ՝ ջրային ռեսուրսների ավելի արդար և արդյունավետ կառավարման ապահովման նպատակով: Կանանց պատրաստումը STEM ոլորտներին և մասնագիտական հնարավորություններին ավելի հավասար հասանելիության միջոցով, կարող է նրանց դարձնել ոչ միայն շահառուներ, այլև բոլոր մակարդակներում առաջնորդներ՝ գիտելիքների ստեղծման և ջրային ռեսուրսների կառավարման որոշումների կայացման գործընթացներում: Հմտությունների զարգացումը (և սերտիֆիկացումը) անհրաժեշտ է՝ հակազդելու կանանց ներկայիս գերանշված լինելուն ցածր արժեք ունեցող և քիչ վճարվող ջրի հետ կապված աշխատանքներում, ինչպես նաև նրանց թերի ներկայացվածությանը որոշումների կայացման և բարձր վարձատրվող պաշտոններում:

Ավանդաբար, պետությունները հիմնականում պատասխանատու են կարողությունների զարգացման համար, սակայն հաճախ անհրաժեշտ է տեխնիկական, կառավարման և ֆինանսական նշանակալի աջակցություն նաև մասնավոր հատվածից և քաղաքացիական հասարակության գործընկերություններից: Ներքին և արտաքին ֆինանսավորումները, որոնք առաջնորդվում են կայունության և ջրային ռեսուրսների հասանելիության և կառավարման հավասարության սկզբունքներով, կարող են նպաստել ավելի արդար և արդյունավետ ջրային ոլորտի ձևավորման ճանապարհը հարթելուն:

Կառավարում

Միջազգային նորմատիվային և իրավապաշտպան շրջանակներն ընդգծում են ջրային ռեսուրսների կառավարման առաջնային կարևորությունը: Ջրային ռեսուրսների, դրանց հասանելիության, բաշխման, ծառայությունների և մատակարարման կառավարումը խորը հետևանքներ ունի մարդու իրավունքների, կենսունակության, կենսապահովման, առողջության և բարեկեցության, ինչպես նաև ընդհանուր առմամբ կայուն զարգացման համար: Սա հատկապես ճիշտ է կանանց, աղջիկների և տարբեր սեռերի, ինչպես նաև նրանց ընտանիքների և համայնքների համար:

Տասնամյակներ շարունակ կոչ է արվել հաշվի առնել գենդերային խնդիրները ջրային ռեսուրսների կառավարման և որոշումների կայացման գործընթացներում, քանի որ առկա տվյալները ցույց են տալիս, որ կանանց մասնակցությունը կարևոր նշանակություն ունի արդյունավետ և կայուն ջրամատակարարման նախագծերի և տեղական ջրային ռեսուրսների կառավարման բարելավման համար: Այնուամենայնիվ, ազգային, քաղաքային և տեղական մակարդակներում, ինչպես պետական, այնպես էլ մասնավոր ջրային հաստատություններում, ջրային ռեսուրսների կառավարման, առաջնորդության և ֆինանսավորման ոլորտներում առկա են ակնհայտ գենդերային բացեր՝ ջրային ռեսուրսների կառավարման և օգտագործողների խմբերում: Կանանց իրավունքները ջրային ռեսուրսների նկատմամբ, դրանց վերահսկողությունը, հասանելիությունը և դրանցից ստացվող օգուտները հաճախ մնում են անիրագործելի:

Երբ կանայք և երիտասարդները մասնակցում են ջրային կառավարման գործընթացներին, հաճախ դա լինում է «թոկենիստական»՝ խորհրդանշական բնույթով: Նրանց ներգրավվածությունը կարող է սահմանափակվել ձևական հանդիպումներով ու խորհրդակցություններով, ինչպես նաև նրանց ներկայությունը պարզապես հաշվառվելու միջոցով, առանց հաշվի առնելու նրանց շարժունակության սահմանափակումները, չվճարվող խնամքի և կենցաղային պարտականությունները, կամ այն, թե արդյոք նրանք ակտիվորեն մասնակցում են որոշումների կայացմանն ու քաղաքականությունների ձևավորմանը:

Կանանց աշխատանքի, գիտելիքների և փորձառության արժեվորման պակասը, ինչպես նաև գենդերային ստերեոտիպերը՝ կապված կանանց որոշակի աշխատանքի տեսակների, ներառյալ ճամփորդության և դաշտային աշխատանքների համար, հիմքում են դնում մասնագիտական սեգրեգացիան և կանանց աշխատավարձի անհավասարությունը:

Ջրային ռեսուրսների կառավարման ոլորտում կանանց և աղջիկների իրական ու արդյունավետ ներգրավվածության խթանումը կարող է իրականացվել իրավական բարեփոխումների և օժանդակ քաղաքականության իրականացման, խտրականության, սոցիալական մեկուսացման դեմ պայքարի իրազեկման ու խթանման, ինչպես նաև շահագրգիռ կողմերի կարողությունների զարգացման միջոցով, ինչը նրանց հնարավորություն է տալիս գիտելիքներով ներազդել որոշումների կայացման և քաղաքականության մշակման վրա տեղական, ազգային և գլոբալ մակարդակներում:

Ֆինանսավորում և ներդրումներ

Անհրաժեշտ է խստորեն խթանել և աջակցել գենդերային գործոնները հաշվի առնող բյուջետավորումը՝ հստակ հաշվետվողականության մեխանիզմներով և լիարժեք թափանցիկությամբ: Մասնագիտական փորձը ցույց է տալիս, որ կամավորական կամ «համապարփակ չնախատեսված» մոտեցումները հաճախ ձախողվում են, ինչը հաճախ հանգեցնում է խորհրդանշական բյուջետավորման և թույլ, երկարատև չլինող ներդրումների: Այնուամենայնիվ, տվյալները ցույց են տալիս, որ գենդերային գործոնները հաշվի առնող բյուջետավորման ներառումը կարող է բարելավել ֆինանսական արդյունքները՝ ուժեղացնելով որոշումների կայացումը, բարելավելով ներքուստ ընդունելիությունը և բարձրացնելով ծրագրերի արդյունավետությունը:

Ջրային ռեսուրսների կառավարման, առաջնորդության և ֆինանսավորման ոլորտներում առկա են ակնհայտ գենդերային բացեր:

Ավելին, սովորական ֆինանսական վերադարձերի հաշվարկներից դուրս գնալու և դրա փոխարեն երկարաժամկետ և լայն սոցիալ-տնտեսական գնահատականներ կիրառելու միջոցով հնարավոր է ֆինանսական ռազմավարությունները դարձնել ավելի ամբողջական՝ հաշվի առնելով ջրային համակարգերում կանանց և աղջիկների կատարած կարևոր, բայց հաճախ չարժևորված դերը: Այդպիսի գնահատականները կարող են ներառել տարրեր, օրինակ՝ ջրի հետ կապված չվճարվող և կենցաղային աշխատանքը, որի տնտեսական արժեքը նշանակալի է, և ճանաչվել ֆինանսավորման ռազմավարություններում: Երկարաժամկետ ու հետևողական ազդեցությունների և արժեքների գնահատումը մարտահրավեր է, սակայն անչափ կարևոր:

Ֆինանսավորման գործընթացում կառուցողական մասնակցությունը կարող է ուժեղացնել վստահությունը, թափանցիկությունը և հանրային պատասխանատվությունը, ինչը կարող է բարելավել ներդրումների կայունությունը: Կառուցվածքային խոչընդոտները վերացնելու համար, ինչպիսիք են հողի սահմանափակ սեփականությունը, բանկային ծառայությունների հասանելիությունը և վարկային պատմությունը, անհրաժեշտ են հատուկ և հարմարեցված մեթոդներ և ռազմավարություններ՝ առանց պարտքի ցիկլերի հավերժացման:

Գենդերային ասպեկտները հաշվի առնող ֆինանսավորման մեխանիզմները կարող են բարելավվել հաշվետվողականության և կոռուպցիայի դեմ պայքարի խիստ միջոցառումների ինտեգրման միջոցով: Ֆինանսական հոսքերի թափանցիկության բարձրացումը կարող է ապահովել ռեսուրսների պաշտպանությունը՝ միաժամանակ բարելավելով գենդերային հավասարության արդյունքները ջրամատակարարման ֆինանսավորման ժամանակ: Բացի այդ, ֆինանսավորումը, որը հաշվի է առնում գենդերային ասպեկտները, չպետք է խորացնի զարգացող երկրների պարտքի բեռը և ստեղծի նոր ֆինանսական կախվածությունները՝ դրանով իսկ խաթարելով ջրային ոլորտում գենդերային հավասարության առաջընթացը:

Եզրափակում

Գենդերային հավասարությունը կարևոր է ջրային ռեսուրսների հասանելիության և ջրային ու սանիտարահիգիենիկ իրավունքների իրականացման առումով:

Չնայած կանայք և աղջիկները կենցաղում ջրի հետ կապված աշխատանքների համար դեռևս հիմնական պատասխանատվություն կրողներն են, նրանք անհամաչափորեն տուժում են դպրոցներում, աշխատավայրերում, առողջապահական հաստատություններում և տնային տնտեսություններում անվտանգ խմելու ջրի, սանիտարահիգիենիկ ծառայությունների հասանելիության բացակայությունից:

Ջրային ռեսուրսների հասանելիությունը, ընդհանուր առմամբ, կապված է հողի սեփականության հետ, ինչն ուղղակիորեն ազդում է արտադրական նպատակներով ջրի մատչելիության վրա, ինչպիսին է գյուղատնտեսությունը, ինչի արդյունքում որոշ կանայք և տղամարդիկ հայտնվում են անբարենպաստ սոցիալ-տնտեսական վիճակում:

Սեռով տարանջատված ջրային տվյալների բացակայությունը շարունակում է մնալ հիմնական խոչընդոտը՝ թաքցնելով հասանելիության, աշխատանքի և որոշումների կայացման ոլորտներում գոյություն ունեցող անհավասարությունները: Այս բացը հաղթահարելը կարևոր է արդյունավետ և հաշվետվողական ջրային քաղաքականություններ ու ներդրումներ մշակելու համար:

Կանայք հաճախ թերի ներկայացվածություն ունեն ջրային ոլորտում զբաղվածության և որոշումների կայացման գործընթացներում, ինչը թուլացնում է նրանց կարողությունը ջրային ռեսուրսների կառավարման պրակտիկաները բարելավելու հարցում: Այնուամենայնիվ, տասնամյակների ընթացքում տարբեր սոցիալ-տնտեսական, կրթական և մասնագիտական նախադրյալներ ունեցող կանայք շարունակում են ներդրում ունենալ ջրային կառավարմանը: Այս զեկույցը հիմնվում է նրանց աշխատանքի վրա՝ ընդգծելով օրինակներ, որոնք կարող են օգտակար լինել ջրային ոլորտում գենդերային բացերը փակելու համար:

Ջրի հետ կապված գենդերային անհավասարության վերացումը առանցքային է աղքատության կրճատման, ջրի և սանիտարական իրավունքների իրականացման և կայուն զարգացման նպատակների մեծ մասի իրականացման համար:

Երբ խոսքը վերաբերում է ջրին, գենդերային հավասարությունը բերում է բոլորի հնարավորությունների ընդլայնմանը:

Հրատարակված է 2026թ. Միավորված ազգերի Կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության, հասցե՝ Ֆոնտենուայի Հրապարակ 7, 75352 Փարիզ 07 SP, Ֆրանսիա, և
«Շրջակա միջավայր և առողջություն» ՀԿ-ի կողմից, հասցե՝ Տիգրան Մեծի 80, 0005 Երևան, ՀՀ:

SC-2026/WS/1
https://doi.org/10.54679/GXEB8967

© ՅՈՒՆԵՍԿՕ և «Շրջակա միջավայր և առողջություն» ՀԿ 2026

Պատրաստված է ՅՈՒՆԵՍԿՕ ԱՋՈԳԾ-ի կողմից | Ռիչարդ Քոնորի

Այս հրապարակումը պատրաստվել է ՅՈՒՆԵՍԿՕ ԱՋՈԳԾ-ի կողմից «ՄԱԿ-Ջրային ռեսուրսներ» կազմակերպության անունից:

Թարգմանվել է «Շրջակա միջավայր և առողջություն» ՀԿ-ի կողմից:

Շապիկի ձևավորում՝ Աննա Մարի Մենինգ Ժիլիչ

Շապիկի լուսանկարը՝ © Աննա Մարի Մենինգ Ժիլիչ

Գրաֆիկական դիզայն և դասավորություն՝ Մարկո Տոնսինի

Սույն հրապարակման մեջ օգտագործվող անվանումները և նյութերի ներկայացումը չեն ենթադրում ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից որևէ կարծիք արտահայտելու որևէ երկրի, տարածքի, քաղաքի կամ շրջանի իրավական կարգավիճակի, նրա իշխանությունների կամ սահմանների ու սահմանագծերի վերաբերյալ: Այս հրապարակման մեջ արտահայտված գաղափարներն ու կարծիքները պատկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ արտացոլեն ՅՈՒՆԵՍԿՕ-ի տեսակետը և չեն պարտավորեցնում կազմակերպությանը:

Հեղինակային իրավունքի և լիցենզավորման վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար խնդրում ենք հղվել ամբողջական զեկույցին, որը հասանելի է այստեղ www.unesco.org/en/wwap.

ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ Աշխարհի ջրային ռեսուրսների գնահատման ծրագիր

Ջրային ռեսուրսների գլոբալ գնահատման ծրագրի գրասենյակ

Ջրային գիտությունների բաժին, ՅՈՒՆԵՍԿՕ

06134 Կոլոմբելլա, Պերուջա, Իտալիա

Էլ. հասցե՝ wwap@unesco.org

www.unesco.org/en/wwap.

unesco
World Water
Assessment Programme

Environment and Health

Մեր երախտագիտությունն ենք հայտնում Իտալիայի կառավարության և Ումբրիա տարածաշրջանի կողմից տրամադրված ֆինանսական աջակցության համար:

Regione Umbria